ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Տիգրան Եսայան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի միջազգային համագործակցության բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

3. Ղազախստանի Հանրապետություն (ք. Ալմաթի), 2025 թվականի հոկտեմբերի 13-17-ը

4. Հրավիրող կողմը.

Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն (ԿԱՀԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Անասնաբուժական կրթության ներդաշնակեցում. Համապատասխանեցում ԿԱՀԿ-ի կարողություններին մեկօրյա շրջանավարտների համար և «Մեկ առողջության» հայեցակարգի ներառում անասնաբուժական բժշկության ուսումնական ծրագրերում» խորագրով տարածաշրջանային սեմինար

5. Քննարկված թեմաները (հարցերը).

Քննարկվել են տարածաշրջանում անասնաբուժական կրթության ներդաշնակեցումը խթանելու և «Մեկ առողջություն» միջդիսցիպլինար մոտեցումն առաջ մղելու համար ԿԱՀԿ-ի աջակցությունը՝ անդամ երկրներին անասնաբուժական մարդկային ռեսուրսների գնահատման, պլանավորման և զարգացման գործում: Այդ նպատակով ԿԱՀԿ-ն մշակել է մեթոդական գործիքների, չափանիշների, ուղեցույցների ամբողջական համակարգ, ինչպես նաև առցանց ուսուցման հարթակ, որը ներառում է 16 մասնագիտական

կարողությունների փաթեթներ: Քննարկվել են նաև տարածաշրջանի երկրների համալսարանների անասնաբուժական կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրման գործընթացին միանալուն առնչվող հարցերը, ինչպես նաև կենդանիների բարեկեցության, ռիսկի վերլուծության, համաճարակաբանության, կենսաանվտանգության և կենսապաշտպանության, հանրային անասնաբուժական ծառայությունների գործունեության, միջազգային առևտրին, հակամանրէային կայունության դեմ պայքարին առնչվող հարցերը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Սեմինարին ելույթ են ունեցել Անասնաբուժական կրթության Եվրոպական ասոցիացիայի (EAEVE) տնօրենը՝ ասոցիացիային միանալու և հավատարմագրման գործընթացին միանալու հնարավոր համագործակցության ձևաչափերը քննարկելու համար: Մինեսոտայի համալսարանի (ԱՄՆ) ներկայացուցիչները նույնպես նույնպես ելույթ են ունեցել՝ պարզաբանելով Ամերիկյան անասնաբուժական բժշկական ասոցիացիայի (AVMA) կողմից անասնաբուժական կրթության հավատարմագրմանն առնչվող հարցերի վերաբերյալ: Քննարկվել են Ղազաղստանի, Ղրղզստանի, ՈՒզբեկստանի, Տաջիկստանի, Ռուսաստանի, Հայաստանի, Բելառուսի անասնաբուժական կրթական համակարգերի ներկայիս իրավիճակը և անասնաբուժական կադրերի պատրաստմանն առնչվող հարցերը:

7. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

2024 թվականի մայիսին Փարիզում ԿԱՀԿ պատվիրակների գլխավոր ասամբլեայի ամենամյա նիստի ընթացքում արդեն իսկ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ սուն թվականի նոյեմբերի 26-28-ը նախատեսվում է կազմակերպել նմանատիպ սեմինար նաև Երևանում:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.** **23.10.2025**